

Թիւրքի գլուխ հանելու համար 400 ոսկուց չափ գումարի մը պէտք կայ: որուն 130 ոսկին անցեալ տարի ապահովուած էր տեղական միջոցներով: Պատրիարքարանը հազիւ առօրեայ կարօտութիւններուն և դիմումներուն կը բաւէ: հեռակարար չափի կըրնայ գոհացում տալ այս խնդրանքին: որ տեղացիներու համար իր մասնաւոր կարեւորութիւնը ունի: յարմար և ընդարձակ ազօրութեան մը չզանելուն համար:

Քղիի տեղապահ Վահրիճ Ս. Վ. հակառակ ձմրան այս խտաշունչ եղանակին աղբերի և բոլոր հայրանակ գիւղերը: և ստուգելով ամէն մէկ գիւղի եկեղեցական կալուածոց որքանութիւնը: առնոց վերաբերեալ գրութիւնները առաջնորդարան փոխադրեր է: Այժմ հետամուտ է եղեր դիւղական վարժարանները բանալ: Վերստին ժողովները կազմակերպեր է և ամէն մէկ գիւղական վարժարանի խնամակալութիւններ հաստատելով: Պատրիարքարանէն ալ նպաստ խնդրեր է այդ աղքատիկ վարժարաններուն համար: անշուշտ առանց ստանալու: Վահրիճ Վ. Քղի գաւառին մէջ վերաբանալ տուեր է ամէնց առաջ գտնուած ընթերցարանը: որուն հոգը յանձնել է կարգ մը պարկեշտ երիտասարդներու:

Պերութի վանքին տեսուչ Մատթէոս վարդապետ Գայրճեան գաւառական կարօտելոց նպաստելու համար՝ մէկ քանի կիրակի յաջորդաբար քարոզներ տալով: անցեալ Ծննդեան տօնին 60 ոսկիէ աւելի հաւաքուեր է: որ Պատրիարքարան պիտի զրկուի: Այդ գումարին 10 ոսկին Մատթէոս Վ. տուեր է:

Տիրաբէքի տեղապահ Եղեկիէլ Վ. Ս. Աստուածածին վանքի վերանորոգութեան համար 200 ոսկիի նպաստ մը խնդրած է Պատրիարքարանէն: որ զժրատաբար չափի կընայ գոհացում տալ սոյն քանասէր տեղապահին խնդրանաց: որովհետեւ հացազին համար եղած խնդրանքներուն իսկ շատ մասնակի կերպով կը պատասխանուին:

Րուհի Մարիա Ալեքսանդրովնայի հոգաբարձութեան հրատարակած հաշիւը ցոյց է տալիս: Թէ որքան մեծ ընդարձակութիւն է ստացել Ռուսաստանում յատկապէս կոյրերի խնամատարութեան գործը: 1898 թ. հաշուից երեւում է: որ հոգաբարձութիւնը 41 հաստատութիւն ունէր իւր խնամքի տակ: Սոցանից 23-ը կոյրերի համար գալոցներ և արհեստանոցներ են այլ և այլ քաղաքներում: Երեքը հանրակացարաններ երկուսն է կոյր արհեստանոցների համար: երեք ապաստանարան գաւառիկ կոյրերի և 10-ը ըտժարան՝ կոյրերի համար զանազան քաղաքներում: Հոգաբարձութեան գրամագլուխը առ մէկն յունուորի 1899 թ. 2807992 ր. Բարեկործական մի ուրիշ նշանաւոր հաստատութիւն է այսպէս կոչուած աշխատարարական ձեռք: Այս հաստատութիւնը Եւրոպայում շատ տարածուած է բոլոր ազգերի մէջ և քրիստոնէական ողորմածութեան վայել մի գործ է: Աշխատարարական ձեռք կոչուած են այն հաստատութիւնները: ուր անգործ բանուորներ: մշակներ աշխատել կարող են իրենց օրական ապրուստը հայթայթելու համար և ազգայնով ազատ կաման մուրացկանութեան անբարոյական արհեստը գործադրելուց: Քրիստոնէական բարեգործութեան զգացումը մեղ թելադրում է օգնել իւրաքանչիւր թշուառի: որ անկարող է աշխատել հիւանդութեան կամ ուրիշ պատճառներով: առողջ մարդուն շարունակ ողորմութիւն տալ և սպանել նորա մէջ աշխատելու բարոյական զգացումը: հեռու է ճշմարիտ ողորմածութեան զազափալից: Այս նպատակով էլ հնարուած են վերոյիշեալ հաստատութիւնները: որ Ռուսաստանում էլ հետզհետէ ընդհանրանում է: Перк. Вѣст. հոգորդած տեղեկութեան համաձայն աշխատարարութեան տները հոգաբարձութիւնը առ մէկն գեկտ 1899 թ. 853997 ր. գրամագլուխ ունէր: որից անձեռնմխելի է 600896 ր. իսկ մնացածը սովորական և արտաքոյ կարգի ծախսերի համար: Աչքի առաջ ունենալով Մ. Աթոռի աղքատների համար գործ դրած մեծամեծ ծախսերը և նորա կատարած շինութիւններն ու այլ և այլ մշակութեան գործերը: շատ հեշտ կերպով կարելի էր նման մի հաստատութիւն հիմնել և այստեղ:

— Թագաւոր կայսրը հրամայել է հանդանուկութիւն բանալ Ռուսաստանի մէջ յօդուտ նիւեօրիկ օրթոգորս եկեղեցու շինութեան: Ընկերութեան տարին է լրանում այն օրից: երբ Կիւեօրկում հաստատուեցաւ ռուսական միտինարութիւնն ու եկեղեցին: Այդ մի պահանջ էր: որ ծագել էր ռուսական դադթականութեան հոսանքով: Ռուսները ցրուելով նոր աշխարհի մայրաքաղաքի մէջ՝ հետզհետէ կարուում էին իրենց

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Ռուսաց բարեգործական հաստատութիւնները մէջ շատ նշանաւոր տեղ է բռնում ն. Պայսերական Մեծութեանց հովանաւորութեան տակ գտնուած մանուկների ապաստարանները: Պայս-

հայրենի եկեղեցուց և լեզուից: Հասերը պատկերում էին կաթոլիկ եկեղեցու մէջ, ուսու երեխաներին ստիպուած էին լատինական ծիսով միջրտել: յատկապէս լեհերի եկեղեցիներում: Հետեւալ զէպրն առիթ եղաւ ուսանելին բաժանուելու լեհերից. մի անգամ, երբ լեհական մատուռը եկել էին ուսմանը ևս աղօթելու: քարոզիչը իւր բանախօսութեան մէջ ուրիշ հերեւախոսների հետ սկսեց նշուել և յայն եկեղեցու հետեւողներին: Այնքան վիրաւորական էր այս զէպրն օրթոդոքս ուսման համար, որ ամենքն ստիպուած էին թողնել եկեղեցին և հեռանալ, Դժգոհները ժողովներ դուստրեցին և վերջապէս վճռեցին զիմել Ալեասկինի եպիսկոպոսին, որ հաճէ գտնէ տարին մի անգամ ուսու քահանայ ուղարկել հաղորդելու և պատարագ մատուցանելու համար: Աղարկուած քահանան կարողացաւ համախմբել ցրուած օրթոդոքսներին և մինչև իսկ քարոզչական միարանութիւն հաստատեց, որ օրթոդոքս համայնքի կեդրոնը դարձաւ: Այնուհետև հետզհետէ ընդարձակուեցաւ օրթոդոքս քարոզչութեան ասպարէզը՝ ոչ միայն համախմբելով հայրենիքից եկած գաղթականներին, այլ և միացնելով Աւստրիայից գաղթած ունիւսներին իրենց հետ: Այս յաջողութիւնն ի նկատի առնելով Ալեասկինի նիւթայ եպիսկոպոսը, խնդրագրով գրեմից Ս. Սինօգին նիւթայում մշտական հովիւ նշանակելու համար: Բոլոր կրօններն նիւթայում ունէին իրենց ներկայացուցիչները, ուսաց աղան ու եկեղեցին ևս պիտի ունենար իւրը: Պատաւարութիւնը իւր կողմից 1000 ռ. նպաստ նշանակեց մի քահանայ և սարկաւագ պահելու համար, իսկ այժմ բարձրագոյն հրամանով ժողովարարութիւն է սկսուած փառաւոր տաճար կառուցանելու համար: Առ այժմ նիւթայի օրթոդոքս համայնքը իւր աստուածապաշտութիւնը կատարում է մի աղօթատան մէջ: Այս իրողութեան շնորհիւ նիւթայի ցրուած ուսմանը բոլորը ոչ միայն խմբուեցան իրենց մայրենի եկեղեցու շուրջը, և նկատելի կերպով բազմանում է համայնքի թիւը, այլ և կապուեցան մայր հայրենիքի հետ: Նոյն ծէսերն ու սովորութիւնները, ինչ որ ունի Ռուսը իւր հայրենիքում, անաղարտ կերպով պահպանում է հեռու պանդխտութեան մէջ, ծանօթելու համար այնքան փոքր է նիւթայի աղօթատունը, որ ասեղ ձգելու տեղ չէ վերում բառի խոսկան նշանակութեամբ, Ուստի և երեխաներին եկեղեցի չեն բերում. բազմաթիւ օտարազաւաններ, որ սիրով կկամենային յաճախել օրթոդոքս եկեղեցու ծէսերը տեսնելու համար, ստիպուած են հրաժարուել իրենց ցանկութիւնից, զրկուած են մինչև իսկ ոչ ուսու ունիւսները: Այս դժուարութիւններն աչքի առաջ առ-

նենալով Ս. Սինօգը 22 հազար դոլար նպաստ է նշանակել եկեղեցու շինութեան համար փող ձեռք բերելու: Գնուած է արդէն հողը 36 հազար դոլարով, իսկ եկեղեցու շինութիւնը կնտի մօտաւորապէս 50 հազար դոլար: Այս նպատակի համար ահա բարձրագոյն հրամանով ժողովարարութիւն է սկսուած ամբողջ Ռուսաստանում:

— Բարձրագոյն հրամանով 1899 թ. դեկտ. 28-ից արեւմտեան Ռուսաստանի Գրուզնոյ քաղաքում եպիսկոպոսական մի նոր աթոռ հաստատուեցաւ: Նոր թեմի կառավարութեան համար նշանակուած է տարեկան 35,896 ռ. Նոր թեմի համար առաջնորդ է նշանակուած Լիւսլայի եպիսկոպոսի տեղակալ Յովակիմ եպիսկոպոսը. նոր թեմը մինչև այժմ Լիւսլայի թեմի մի մասն էր կազմում:

ՅՈՒՆԱՏ ԵՆԴԵՑԻ

Անգլիոյ Եւրոպիոյ պատրիարքի գործունեութիւնը. — Մեկտիսոն նորընտիր պատրիարքը իւր հայրապետական աթոռի վերայ բարձրանալուց անմիջապէս յետոյ՝ բոլոր ուշադրութիւնը դարձրել է հոգևորականութեան կրթութեան վերայ: Մինչև այժմ հոգևորականները կրթութեան և նախապատրաստութեան դրօժը անխնայութեամբ էր յանձնուած, ինչպէս մեր մէջ, բայց նորընտիր պատրիարքը, որպէս բարձրագոյն կրթութիւն ստացած մարդ, լաւ է հասկանում, թէ եկեղեցին իւր դաստիարակչական բարձր նպատակին ծառայել չէ կարող, մինչև արժանաւոր տղասուորներ չունենայ: Ուստի և իւր անձնական միջոցներով Բալթիկում վանքում հոգևոր դպրանոց է հիմնել վեցամեայ ընթացքով և ընդարձակ ծրագրով: Մոսկ. ՎԵՃ. թղթակցի տանելով հետեւեալ առարկաներն են մտնում ծրագրի մէջ. արաբերէն, մատեմատիկայ, աշխարհագրութիւն, քաղաքական պատմութիւն, բնախօսութիւն, աստղագիտութիւն, փիլիսոփայութիւն, տրամաբանութիւն, իրաւաբանական հանրագիտութիւն, թուրքերէն, յունարէն և ռուսերէն լեզուները, սլոբակայն պատմութիւն, ծիսապաշտութեան և աղօթքների բացատրութիւն, քրիստ. վարդապետութիւն, քրիստ. բարոյականութիւն, ներածութիւն Ս. Գրքի, մեկնաբանութիւն, եկեղեցական պատմութիւն, հայրաբանութիւն, եկեղեցի, իրաւագիտութիւն և երաժշտութիւն, նորընտիր պատրիարքը առանձին ուշադրութիւն է դարձնում ատոմաւորական գիտութիւնների և լեզուներից արաբերէնի, յունարէնի և ռուսերէնի վերայ: Հոգևոր դպրանոցի հոգաբարձու է նշանակուած Տրեպոլսի մետրապօլիտը, իսկ տեսուչ՝

աստուածաբանութեան ուսուցիչ Կանդապետ: Անտիոքի պատրիարքութեան այլ և այլ կողմերից պատանիները զիմում են Բալամանյի դպրանոցը: որ բացուել է ներկայ թուականի յունւարի 3-ին: Գպրանոցի աշակերտները առանց բացառութեան համարում են Ս. Պատրիարքի սաներ: որ իրենց ուսումը աւարտելուց յետոյ պարտաւորուած են ծառայութեան մէջ մտնել պատրիարքի կարգադրութեան համաձայն: Արեւելեան եկեղեցիներէ վերահեղանութեան միակ ճանապարհը քրիստոս կրթութեան ճանապարհն է: որ իմաստութեամբ ընտրել է նորրոնից պատրիարքը:

— Անցեալ տարի ապր. 4—16-ին Աւստրալիայի Սիդնէյ քաղաքում օժուել է օրթոդոքս առաջին եկեղեցին Ս. Երրորդութեան անունով: Նոր եկեղեցու ծխականները կազմուած են մեծ մասով Յունաստանի և Թուրքիայի յոյն դպրականներից և իտերաթիւ ուսններից ու սլաւոններից: Ցածարի շինութիւնը 1000 ք. է նստել եկեղեցու վերաշինութեան սկզբնապատճառը Երուսաղէմի Դամիանոս պատրիարքն է եղել: Եկեղեցու աւագերէցն է Սերաֆիմ Փօկաս անունով անձը:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

— Հակակաթոլիկական շարժումը Աւստրալիայում համեմատաբար այժմ խաղաղ, բայց դարձեալ անդադար առաջ է դնում: 1899 թ. դեկտ. 17-ին խուռն բաղմութեան ներկայութեամբ Տեպլիցից ոչ հեռու Տուրնում օրհնուել է (բողոքականները օժումն չունին) առաջին եկեղեցին, որպէս հետևանք այդ շարժման: Նոր օրհնուած եկեղեցին ժամանակաւոր է և միայն 500 հոգու համար պատրաստուած. շուտով պէտք է ձեռնարկուի իսկական եկեղեցու շինութեան:

Հալլէի համալսարանի աստուածաբանութեան մասնաւոր ուսուցիչ դր. Վլեմմեր, որ իւր և իւր ներկայ է եղել եկեղեցական հանդիսին: Նկարագրում է այն ոգևորութիւնը, որով այժմ բռնուած են բոհեմիայի նորագործները: Վրօնական և հոգևոր կեանքը նորագործների շրջանում շատ բուռն է և կենդանի: Եկեղեցիներում կատարուած աստուածապաշտութիւնից զատ ժողովներ են գումարուում մասնաւոր ընտանեկներում, կամ այսպէս կոչուած ընտանեկան երեկոներ են կազմում հասարակաց դահլիճներում, ուր նորագործների հետ հաւաքում են և հին բողոքականները: Դասախօսութիւններ, երաժշտութիւն, լարեկամական խօսակցութիւններ ու յարուցած խնդիրներն վերաբերեալ տպուած տետրակների տարածումն նպաստում են շարժման ընդարձակման:

— Բայց ինչպէս երևում է հակակաթոլիկական շարժումն սկսուած է նաև սլաւոնական տարրի մէջ: Հին կաթոլիկ դր. Իլիան Եռանդուն գործունէութիւն է սկսել Չեխերի մէջ հռովմէականութեան դէմ: Պրագում նա այժմ եկեղեցական—քաղաքական մի թերթ է հրատարակում Նորոգիի Վարդիկ անունով, որով այն դադարին է քարոզում թէ պէտք է սլաւոնական ազատ եկեղեցի հաստատել արտաքայ հռովմէական գերիշխանութեան: Թերթի ճակատը զարգարում է Հաւսի պատկերը, որ կաթոլիկութեան առաջին հակառակորդ էր Չեխիայում և Լուսեի բարեփոխութեանց կարողաւոր: Երկու օրովին քահանայ բողոքականութիւն են ընդունել և ժողովուրդը կամենում է մայրենի լեզուով Ն. Կտակարան ունենալ: Բայց կաթոլիկ հոգևորականութիւնն էլ իւր կողմից անտարբեր չէ մնում դէպի այս շարժումը: Գրաւոր թերթերի և տետրակների միջնորդութեամբ, բերանացի՝ դասախօսութիւններով և քարոզներով կամ ուրիշ միջոցներով ամեն կերպ աշխատում է մաքառել հակակաթոլիկական շարժման դէմ:

Հակակաթոլիկական շարժումն կայ ոչ միայն Աւստրալիայում այլ և Պրուսիայում. 1880—1897 թ. կաթոլիկութիւնից բողոքականութեան դարձած անձանց թիւն է 40,000, այն ինչ նոյն ժամանակ ընթացքում բողոքականներից միայն 4400 հոգի են կաթոլիկութեան դարձել: Կաթոլիկութիւնից բողոքականութեան դարձածների ամենամեծ աօկոսը Շլեզիայինն է՝ 148,34 հոգի, այն ինչ նոյն նահանգում բողոքականութիւնից կաթոլիկութեան դարձողների թիւը 811 է:

— Կաթոլիկութեան հակառակ կարծես դժբանալ է սկսում և այսպէս կոչուած հին կաթոլիկութիւնը: Այս նոր եկեղեցին ծագել է 1870 թ. յետոյ պապի անսխալականութեան վարդապետութեան դէմ բողոքողների ձեռքով: Հին կաթոլիկները, ինչպէս իրենց անունն էլ ցոյց է տալիս, կամենում են վերանորոգել հին քրիստոս եկեղեցու կաթոլիկութիւնը: Նորա շատ բարեկամ են Հայոց եկեղեցուն: Անցեալ տարուայ դեկտ. 17-ին Հռոմում մի նոր մատուռ են հիմնել: Իտալիայի հին կաթոլիկներին համար Եպիսկոպոս է ընտրուել Երեմմ Ս. Պետրոսի Կանոնիկոս Կոմս Էնրիկոյ Կամպելլոյ, նորընտիր Եպիսկոպոսը օրհնեց նաև նորահաստատ համայնքի գրողակը՝ ոսկեզօծ խաչ կարմիր ժօնի վերայ:

— Բելգիայի վեց միլիոն բնակիչներից միայն 30000-ը բողոքականութեան են պատկանում: Կաթոլիկ եկեղեցիներին և մատուռներին թիւը 5850 է 6600 քահանաներով, իսկ վանքերի թիւը 1784 է 3000 վանականներով և կոյսերով:

— Քրանսիայում հակակղերական շարժումը

նորանով վերջացաւ որ Աստուծոյ խնայողութեան շնորհիւ ինքնապաշտօնաւորութիւնը իւր շարժումը պէտք է կանգ առնէր ներկայ տարուայ մէջ բացառելիք ցուցահանդիսի պատճառով: Քրիստոնեական կառավարութիւնը ձգտում է այժմ ըստ կարելւոյն խաղաղութիւն պահպանել ներքուստ և արտաքուստ: Խաղաղութիւն պէտք է պահպանել և եկեղեցու մէջ:

— Սպանիայի տարեկան ծախսերն նախահաշուի մէջ հոգեւորականութեան և վանքերի համար նշանակուած է 42 միլ. մարկ: Իսկ համալսարանի և դպրոցական գործի համար 12 1/2 միլ. մարկ:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Քրիստոնեական գեղեցիկ հաստատութիւններ են այսպէս կոչուած կաղաքաւորութիւնները: Ներքին միասնութիւն կամ նման քրիստոնեական ընկերութիւնների ձեռքով գեղեցիկ առողջարար օգուտ յայտնի վայրերում հիմնուած են կաղաքաւորութիւն հաստատութիւններ ամեն դասակարգի և հասակի մարդկանց համար: Կաղաքաւորութիւն պէտք ունեցող բոլոր նիւթական մեծ կարողութիւնից զուրկ անձինք, այնտեղ շատ է ժամ գնով ապրել կարող են: Ընկերութեան նպատակը միայն քրիստոնեականութիւնն է և ոչ նիւթական վաստակը: Ուստի և հնարաւորութիւն ունի համեմատաբար շատ աւելի է ժամ գնով յարմարութիւններ պատրաստել հիւանդների համար: քան առեւտրական նպատակով հիմնուած նման հաստատութիւնները: Այլ ապրել է մեծ քաղաքներում խեղճուած օգի մէջ և գիտէ, թէ ինչպիսի մեծ նշանակութիւն ունի երկար, անընդհատ աշխատանքից յետոյ ամառուայ ամիսներում մի երկու շաբաթ հոգստուն վայրելում հանգստութիւնը: Նա կարող է ըմբռնել այս հաստատութիւնների նշանակութիւնը: Եկեղեցին որպէս ողորմած և գթած Քրիստոսի հաստատութիւն, պարտաւոր է մտածել երբեմն նաեւ իւր խեղճ անդամների առողջութեան վերայ: Մենք կարծում ենք ամենեւին գծուար չէր լինի մեր մի քանի վանքերն այսպիսի նպատակների համար գործադրել: մանաւանդ այնպիսիները որոնք քաղաքներին մօտ են և հանրային ջրեր ունին: օրինակ Խճկանից վանքը արեւմտեան Երբակում Կարսի և Ալեքսանդրապոլի մէջ, Յակոբայ վանքը Արցախի Խաչնոյ գաւառում Եւջուայ մօտ: որ մեծ քանակութեամբ և ընտիր հանքային ջրեր ունի: Այժմ էլ ժողովուրդն օգտուած է, բայց կարելի էր այդ գործը կանոնաւորել և քրիստոնեական գեղեցիկ բարեգործական հաստատութիւն շինել: որ մինչև իսկ եկեղեցուն նիւթական օգուտներ բերէր:

— Լայպցիգում մի սարկաւազանց պէտք է շինուի: որի համար ծրագրուած է մի միլիոն մարկ

գործադրել: 700000 մ: հանգանակուած է արդէն: Այստեղից կարելի է եզրակացնել, թէ ինչպիսի մեծ հաստատութիւն է այս և ինչպէս ժողովուրդը գնահատում է այն: որ միայն շինութեան համար մի միլիոն մարկ նուիրարարութիւն է անում:

— Սաքսոնիայի Լաուզիցաց գաւառի բոլոր համայնքները մի դաշնակցութիւն են կազմել իրենց համայնքների համար սարկաւազութիւններ պահելու նպատակով: Բողոքական եկեղեցու մէջ սարկաւազութիւն նշանակում է հիւանդապահ կնի, կամ ողորմածութեան քոյր, ինչպէս սովորաբար գործ ենք անում: Ֆրանսերէնից կամ ռեբելից վերցնելով: Իւրաքանչիւր պատուիրի իշխանութեան տակ մի երկու այդպիսի քոյրեր խնամում են համայնքի մէջ եղած հիւանդներին և խեղճերին: Ընտանիքի անդամները շատ անգամ անկարող են լինում իրենց հիւանդին լաւ խնամելու: կամ երբեմն մինչև իսկ հասկացողութիւն չունին: թէ ինչպէս պէտք է խնամեն և ահա սարկաւազութիւնները օգնութեան են հասնում այդպիսիներին: վարժուած լինելով ըստ անհրաժեշտ հիւանդապահութեան մէջ: Այդ սարկաւազութիւններն են նոյնպէս աղքատների, յատկապէս կանանց և նոցա երեխաների խնամատարները: Յաճախ սարկաւազութիւնները միմեարիչ հրեշտակներ են գառնում այնպիսի կանանց և ընտանեաց համար, որոնց զուրկ օր: արեւցող է: անհոգ իւր ընտանեաց համար: Մեր եկեղեցին չունի այսպիսի հաստատութիւն: այդ գործը քահանաների վերայ է ընկնում: կատարելու: բայց քանի՞ հոգի կարող ենք գտնել մեր քահանաների մէջ, որ իրենց քահանայական կոչումը այդպէս սուրբ և ընդարձակ մտքով ըմբռնեն: Յնորք կլինի մեծամեծ բաներ սպասել մեր քահանայութիւնից: մինչև որ քրիստոնեական կրթութիւնն ու գոնէ չափաւոր գիտութիւնն անպայման նախապատրաստութիւն չընդունի քահանայական կոչման համար:

— Ժողովրդական բարձր դպրոցական գասընթացքներ սկսուել է և Լայպցիգում: Այժմ դասախօսութիւն են կարգում երկու հոգի, առաջինն է ուսուցչապետ Բարր: որ խօսում է ականչի և լսողութեան մասին: իսկ երկրորդն պատուիր Ռեհոմ: որ խօսում է քրիստոնեական և ներկայ ժամանակի բարոյական զգացման մասին: երկրորդի դասախօսութիւնը հետեւեալ մասերից բաղկացած կլինի ա). ընկերական և հասարակական առարկաների շնանակութիւնը: բ). Անձնաւորութեան նշանակութիւնը և անհատի պարտաւորութիւնը դէպի ինքը: գ). ներկայ քաղաքակրթ մարդու բարոյական պատկերազմը: դ). Յիսուս Քրիստոսի կրօնը որպէս բարոյականութեան զօրութեան աղբիւր:

— Փոքրիկ Սաքսոնեան 17 գիմնազիա ունի 5983 աշակերտներով 231 դասարանում տեղափոխուած, որով իւրաքանչիւր դասարանը միջին թուով 26 աշակերտ ունի: Առեական քաղաքի դպրոցների թիւը 10նէ, 3892 աշակերտներով 155 դասարանի մէջ, իւրաքանչիւր դասարանն 25 հոգի: Հասարակական 28 քէալ. գիմնազիաներն 8393 աշակերտ, իսկ աղջիկներանց բարձրագոյն (միջակ) դպրոցներ 1048 աշակերտուհի ունին: Այս թուերի մէջ չեն մտնում համալսարանի ուսանողներն ու ծխական դպրոցների աշակերտները:

— Գրեզդենի ներքին բարոզութեան (միսիոնի) ընկերութիւնը նիւթական մեծ նեղութեան մէջ էր ընկերութեան համար առանձին շինութիւն կառուցանելիս պարտքերի տակ ըկնելով: Ընկերութիւնը հազիւ կարողանում էր պահպանել իւր գոյութիւնը և մեծ երկկուղ կար: որ կաթոլիկութիւնը իւր մրցութեամբ ոչ միայն աւելի մեծ յառաջդիմութիւն պիտի անէ, այլ և ընկերութեան տունը նոցա ձեռքը պիտի անցնէ: Այս համաժամեքը տեսնելով մի քանի հարուստ և իրենց մայրենի եկեղեցուն նախանձախնդիր քաղաքացիք իրենց մէջ հանգանակութիւն են բացել և իհս միլիոն մարկ նպաստ հաւաքել ընկերութեան օգտին:

— Սաքսոնիայում «աւետարանական ընկերութեան դաշնակցութիւնը» 28 Ժիւղ ունի 4188 անդամներով: Այս դաշնակցութեան նպատակն է նիւթապէս և բարոյապէս նպաստել բողոքականութեան զօրանալուն և տարածման:



ԺԱՂԿԱՔԱՂ ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

«ՀԱՐԱՆՅ ՂԱՐԲԻՅ»,

որ 1723 թուին սպած էր ի Կ. Պոլիս:

— Մի եղբայր հարց արաւ հայր Անտոնին. «Ի՞նչ կանոն պահեմ, որ հաճելի լինեմ Աստուծուն»: պատասխան տուաւ ծերը և ասաց. «Աւր որ զնաս, միշտ Աստուծուն քո աչքին առաջ ունենաս: ամեն գործածիւղ համար վկայութիւն ունենաս: Գրեցի. և մի տեղ որ կենաս, շուտով չրժուխուես կամ աւելի լաւ է՝ տեղեկդ ամենեկն չըշարժուես»:

Հարց արաւ հայր Պամբոն հայր Անտոնին. «Ի՞նչ է աւելի օգուտ, որ գործեմ»: Ծերն ասաց. «Յոյս չըդնես քո արդարութեան վրայ, անցած

բանի վրայ չափոստաս. և զգուշութիւնով պահես լեզուդ և որկորդ»:

— Մի եղբայր հարց արաւ հայր Բեռարիոնին. «Ի՞նչ անեմ, ո՞վ հայր:» Նա ասաց. «Աճուռ կաց, ուրեշին մի դատիր: քննիր միայն քո սննդը»:

— Հայր Բեռարիոնն վախճանուելիս իւր աշակերտներին ասաց. «Միշտ ուրախ գոտարթ կացէք, անդադար աղօթեցէք, ամեն վեճակի մէջ զոհ եղէք»:

— Գրեզդր Աստուածաբանն ասաց. «Երեք բան է պահանջոււմ ամէն մկրտուած մարդուց. առաջին, ուղիղ հաւատ նրա հոգու համար, երկրորդ՝ նրա բերնից ճշմարտութիւն և երրորդ՝ սրբութիւն նրա մարմնից»:

— Հայր Եպիփանն ասաց. «Աւա կըլինի, եթէ հնար է, ամեն քրիստոնեայ կարգաւ սովորէ: Գիրքը, որի միայն տեսը ազգում է մեզ և պաշտպանում մեղքից, որչափ ևս առաւել նրա ընթերցանութիւնը, որ կեանք է տալիս մեր հոգուն և սիրել է տալիս արդարութիւնը: Մարդուս համար մեծ հաստատութիւն է անմեղութիւնը և սուրբ գրքերի ընթերցումը: Սուրբ Գրքից տգէտ լինելը կորստեան մեծ խորխորտ է և խոր խաւար: Ասածու օրէնքներ չեմանալը՝ կեանքի անկում և կորուստ է»:

— Ոչ ոք չի ստանալ Քրիստոսին, բայց եթէ ջանքով. քրտինքով, խոնարհութեամբ և միշտ աղօթելով:

— Երեք եղբայր զնացին հայր Պալմիտիի մօտ և խնդրեցին մի շահեկան բան ասել նրանց. ասաց ծերը «Ի՞նչ բան էք կամենում, որ տեսմ, հոգեւոր թէ մարմնաւոր»: Ասացին «Հոգեւոր»: Երեսունին պատասխանեց. «Գնացէք սիրեցէք վիշաք առաւել քան հանգիստը, արճամարհանքը քան փառքը, սիրեցէք տալ, քան թէ առնել»:

— Մի վաճառական ժողովեց շատ բազմապիսի ահուճք և իւր ծառաների հետ նաւ նրստեց, որ տանէ օտար երկրում ծախէ. նաւաւարներն այս իմանալով, խորհուրդ արին իրենց մէջ, որ սպանեն վաճառականին և նրա ծառաներին և յափշտակեն ահները: Վաճառականի փոքրիկ սպասուորը՝ լսելով շարժմաների գաղտնի խորհուրդը՝ յայտնեց իւր տերը: Սա այն ժամանակ կանչեց իւր ծառաներին և ասաց. «Ինչ որ հրամայեմ՝ խիղճն կը կատարէք»: Բերել տուաւ մի մեծ սփռոց, մէջը թափեց բոլոր ահները, չըթողեց իւր մօտ և ոչ մի հատ ու հրամայեց ծառաներին բոլոր նաւաստիներն աչքի առաջ թափեն ծովն: ասելով. «չնչին» խաբուսիկնիւթ, որ պիտի պատճառ լինէր այլքան մարդու կեանքից զրկուելուն և այնքան սճարագործների հոգիներն կորստեան: Նաւաստիները մնացին տար-